


ԲԱԺՆԵԳԻՆ

Ի Պուլկարիա
Տարեկ. 10 ֆր.
վեցամս. 5 "

Արտասահման
Տարեկ. 12 ֆր.
վեցամս. 6 "

Ամերիկա
2 Տոյ. 30 անդ.
ԿԱՆԻՍԻԿ



ՊԱՅՄԱՆՔ

Գրութիւնք ետ
չեն տրուիր:

Հասցէ
DIRAN
PAPAZIAN
YILDIZ TABIA
VARNA
BULGARIE

ՇԱՐԱԹԱՅԱՆԴԵՍ · ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԻԵԾՏԱԿԱՆ


— Отговорникъ ГЕОРГИ ЯНТОВСКИЙ, Адвокатъ. —

Ե. ՏԱՐԻ

— ՄԱՅԻՍ. 5 ՇԱՐԱԹ 1901 —

ԹԻՒ 211

ԱԶԳԱՅԻՆ



Մանչեսթր բնակող Ալգային մը 50 հառ
փանելա վերմակ նուիրած է Ալգային Հիւան-
դանոցին:

— Կարինէն կը գրեն թէ հունձքերուն
առատութեանը պատճառաւ հացին օխան (400
տրամ) 30 փարայի իջեր է:

— Սեփաստիոյ Որբանոցի Արհեստանոցին մէջ
չինուած աթոռ, թիկնաթոռ եւ կոշիկներէն մէջ
մէկ նմոյշ զրկուած են Պատրիարքարան:

— Կայսերական իրատէի մը համաձայն
պաշտօնական արտօնութեամբ բացուած ոչ — մահ-
մետական դպրոցներուն համար օտար երկիրներէ
ներածուած դիտական գործիքները, դպրոցական
պիտոյքները ու դասական գրքերը մաքսատուրքէ
ազատ պիտի մնան:

— Էնկիւրիէն կը ծանուցանեն թէ իւրեւ հիւր
հոն գտնուող 8000էն աւելի Պօշնագ (Առնամուտ)
գաղթականներուն բնակութեան համար, Էնկիւ-
րիի, Զիյրի եւ Սիվրիհիսարի մէջ 367 արտավար
հողեր գտնուած են, որոց վրայ 2000 բնակա-
րաններ պիտի շինուին: Նոյնպէս Եօզլատի, Գըր-
չէհրի, Զօրուսի եւ Կեսարիոյ մէջ շատ մը թափուր
եւ հողեր գտնուած են, որոց վրայ գիւղեր պիտի
կազմակերպուին թուրք գաղթականներու համար:

Վերոյիշեալ 8000 առնամուտները եւլտըզի
պալատան այն վաշտ մը զօրքերն են բրոնք քա-
նի մը տարի առաջ ապստամբական շարժում մը
պիտի ընէին, բայց կառավարութիւնը գանոնք
էնկիւրիի կողմէրը աքսորեց:

ՊՈՒԼԿԱՐԻՈՅ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

Պուլկարիոյ եւ Ռուսմանիոյ Վիճակները վերա-
կազմելու համար Խառն Ժողովոյ անցեալ նիստին
մէջ կազմուած Յանձնաժողովը հրաւիրած է նիստ
ընելու: Այս խնդիրը երկար ատենէ ի վեր
վարչութեան սեղանի վրայ կը գտնուէր. Կրօն.
Ժողովը վերջին անգամ խորհեցաւ Ռուսմանիոյ
Այցելու Հովիւի պաշտօնը առժամաբար յանձնել
Տ. Գէորգ եպիս. ի, որ բաւական տարիներ առաջ
ալ այդպիսի շրջուն Հովիւի պաշտօն մը վարած
է մանրամասն տեղեկագիր մը մատուցած է
Վարչութեան: Բայց Երուսաղէմի Ս. Պատրիարքը
Պոլսոյ մէջ Աթոռին ունեցած գործերուն կարեւ-
որութեան եւ ստիպողութեան պատճառաւ, չի
հաւանիր իր փոխանորդին պաշտօնէն հեռանա-
լուն: Հետեւաբար աւելի որոշ եւ վերջնական
կարգադրութեան մը պէտք կ'ար, եւ այդ նպատա-
կաւ կազմուեցաւ այս Յանձնաժողովը, որ բնա-
կանաբար նկատողութեան պիտի առնէ նաեւ Տ.
Գէորգ եպիս. ի նախապէս մատուցած տեղեկա-
ցիւրը: Պատրիարքարանը Պուլկարիոյ եւ Ռուսմա-
նիոյ Հայոց կը վերադաձնէ իրենց ընտրական
իրաւունքը, ինչպէս Ս. Հայրապետը Հնդկաստանի
Հայոց ուղղեալ Կոնդակով մը նոյնը կ'ընէր: Բայց
այս երկու վիճակներու ժողովուրդն ալ միեւնոյն
պարագաներուն մէջ կը գտնուին այս պահուս,
եւ իրենց կատարելիք գործին վրայ պէտք եղած
գիտակցութիւնը չունին. ուստի կարեւոր է որ
լեզուագէտ եւ կարող եպիսկոպոս մը զրկուի նախ
որպէս զի կարեւոր տեղեկութիւնը եւ ծանօթու-
թիւնը տայ, ժողովուրդը նախապատրաստէ եւ

ըստ այնմ այդ եպիսկոպոսին նախագահութեամբ եւ ընդհանուր վիճակայնոց մասնակցութեամբ ընտրէ իր Առաջնորդը։ Այս մասին տեղական իշխանութեանց հետ ալ բանակցելիք կէտեր կան որոնց համար զրկուելիք եկեղեցականին լեզուագէտ ըլլալը անհրաժեշտ է։ Կը լսենք թէ Պուրսայի առաջնորդ Տէր Յովհաննէս եպիսկոպոս տրամադիր է ընդունիլ այդ պաշտօնը, եթէ Պատրիարքարանէ առաջարկուի իրեն եւ աւելորդ է ըսել թէ Արշարունի Սրբազան այս պաշտօնին համար Պատրիարքարանի փնտռած եկեղեցականն է։

Սուրհանդակ

ՏԵՂԱԿԱՆ

Կը լսենք թէ Օր. Իսկուհի Նորիկեան՝ որուն ձեռագործի ճիւղին մէջ ունեցած յաջողակութիւնը մինչեւ իսկ օտարազգիներէն գնահատուած է, մտադիր է մասնաւոր վարժարան մը բանալու։ Պէտք եղած նախնական դիւրութիւնները մատուցանել խոստացեր են քաղաքիս մէկ քանի կրթասէր և կարող ազգայինք։

Յաջողութիւն կը մաղթենք։

ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ

ՎԻՊԱԿԱՆ ԽՆՁՈՅՔ ՄԸ

Բերայի բարձր դասու ընտանիքներէ մին անցեալ կիրակի (ապրիլ 29) խնջոք մը տուաւ, որուն նմանը քիչ անգամ տեսնուած է մայրաքաղաքին մէջ։ Յաւակալէս զրկուած կառքեր, ցերեկուան ժամ Յին, հրաւիրեալները փոխադրեցին ի Բերա՝ ճոխ տուն մը, որ օրուան ընտանեկան խրախճանութեան ամօթիւ շքեղապէս զարդարուած էր։ Հրաւիրեալները, որք մայրաքաղաքին բոլոր լժողերը կը ներկայացնէին, երբ տունէն ներս մտան, իրենց արամադրութեան տակ գտան մէկ մէկ ձեռք . . . նոր կաթուած շքեղ լաթ, ամբողջ մանրամասնութիւններով։ Հիւրամեծարաները փափկութեամբ խնդրեցին հրաւիրեալներէն հանել իրենց սովորական լաթն և այս նոր հագուստներով ներկայանալ տանտիրոջ և տանտիրուհիին։

Շփոթութիւնը, իրարանցումն ու ժխորն սկսաւ

հրաւիրեալներուն մէջ, որք չէին հաւատար այս անակնկալին եւ երազի մէջ կը կարծէին զիրենք։ Վերջապէս տեղի տալով հիւրամեծարներու փափաքին, հագուեցան ու նոր լաթերով առաջնորդուեցան սրահ, ուր տանտէրն ու տիկինը նոյնպէս հագուած ընդունեցին զիրենք, նմանը խիստ քիչ անգամ տեսնուած հիւրասիրութեամբ։ Փոխադարձ ներկայացումներէ վերջ սիրալիր խօսակցութիւն մը տեղի ունեցաւ, որուն յաջորդեց դաշնակը։

Ընթերցողաց համբերութիւնը չփորձելու համար փութանք ըսել թէ տանտէրը չենք ճանչնար, քանի որ չէ ուզած ինքնութիւնն յայտնել հրաւիրեալներուն, որք մայրաքաղաքին ամէն թայրերու յետին աղքատներէ ընտրուած մանկիկներ էին։ Ընոնցմէ մին, որ օրօրօցէն գժբախտ ծնած տղեկ մէ, մանկական միամտութեամբ պատմեց մեզ նկարագրութիւնը խնջոյքին, որուն նմանը հիանքին մէջ չէ տեսած։ Սրահ, դաշնակ, գորգ ջահ, մէկէն միւսին կանցնէր, և միջանկեալ կերպով նկարագրութիւնը կ'ընէր տոհմիկ ընտանիքին բարեսիրտութեան ազնուութեան ու խոնարհամտութեան։ «Ըմէնուս հետ ալ խօսեցաւ, կը կրկնէր գնահատելով առժեքն իրենց ընծայուած հիւրասիրութեան։ Ինքն ալ երկու տղայ ունի եղբր գիշերօթիկ վարժարանը, մանչ մըն ալ ունէր մեզի չափ, մեզի ըսաւ որ դուք ալ իմին պաւակներս էք, ամենքնիդ ալ շատ կը սիրեմ»։ Յետոյ քանջանօք խօսեցաւ Տիկնոջ արդուզարդին և մանաւանդ մարգարտայեւ պսակին վրայ, որուն նմանը մէկ հատ մըն ալ տանը դրան վրայ կար, ըսաւ։

Փոքրիկ հիւրերը սրահի կեանքը լիովին վայելելէ վերջ, պարտեղ իջեր եւ բաւական խաղացեր են Ցանտիրոյ տղեկին հետ և անմիջապէս վերջը սեղան նստել են։

Ո՛հ, սեղանին նկարագրութիւնը . . . ինչպէս բացատրէ տղան տեսած ճոխութիւնը, փայլն ու համապատմները, քանի որ շաբաթն անգամ մը հաշիւ կարժաւանայ տաք ապուր խմելու։

Բիւր շնորհակալութիւն մարդասէր ամուսիններուն որք գիտցան գոնէ օրուան մը համար մեղմացնել կեանքի դառնութիւնն այս զրկուածներուն։ Հրաւիրեալները կուշա ու կուռ ճաշելէ ու եղանակին ամենէն թարմ, ամենէն համեղ միջոցներն ու քաղցրաւէնները վայելիլէ հտք, ստացան նաեւ մէկ մէկ տուփ շաքար և մէկ մէկ . . . հասկոյր։

Կէս օրէն վերջ յատուկ կառքերով փոխադրուեցան իրենց տնակներն ուր ծնողք նոր լաթերով պճնուած տեսնելով իրենց զաւակուները, սկսան աղօթել ան ծանօթ բարերարներու կենաց։

Բիւզա նդիոն

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐՁԻՆ ԼՈՒՆԵՐ

Յունաստանի թագաւորը Ապացիաի մէջ այս յարթու պիտի տեսակցի Ռումանիոյ թագաւորին հետ:

— Լորտ Քիշնէր Թրանսվալի կուսակալ անուանեցաւ Սըր Ալֆրէտ Միլնըրի տեղ որ Անգլիա մեկնեցաւ:

— Ձարին մէկ հրովարտակը կը հրամայէ 424 միլիոն ֆրանքի փոխառութիւն մը հրապարակ հանել հարիւրին 4 տոկոսով: Պ. Ռօշիլտ՝ Բարիզէն փեղերսպուրկ մեկնեցաւ փոխառութեան պայմանագիրը ստորագրելու համար:

— Բեքինի օտար տէրութեանց դեսպանք որոշեցին Ձինու ներկայացնել հաւաքական ծանուցագրով մը պատերազմական տուգանքին ամբողջ գումարը, 450 միլիոն դալք: Թայնզ կըսէ թէ Ձինական արքունիքը իմացուցեր է Լի Հունկ վճարել տէրութեանց պահանջած տուգանքը միմիայն մաքսատանց հասոյթներուն աւելցած մասովը:

— Անգլիոյ Երեսփոխանական ժողովը մայիս 10ի նստին մէջ քուէարկեց էտուարտ Է ի անձնական գանձին գումարը, որ 11,750.000 ֆր. (470.000 անգլ. ոտկի) է:

ՓՈՔՐ ԹՂԹԱՏԱՐ

Ե. Գ. Պ. Տօպրիշ. — Տ. Հայրը Էուսթայէն վերագործաւ և սակէ առաջ ձեռ մասին մեզի ըսածը կրկնեց: Ստուգեցինք նաև թէ զուր Պ. Մկրտիչի սրճարանին մէջ ալ մէկ բանի անձանց ներկայութեանը որոնցմէ է նաև Տ. Ռուբէն Համարձուժեան ազգայինը, յայտարարած էր թէ Տ. Գեորգ քահանայն Աւագ Հինգշաբթի չի պատարագեց:

Այս չափ բացատրութիւն բաւական համարելով այլևս խնդիրը փակուած է մեզ համար:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՐՔԵՐ

ՍԱԼՕՆԻ ԿԵԱՆՔԷ

ՄԵՌԵԼԻՆ ՇՈՒՐՁԸ

(Սեւ շլարշներով զարդարուած սենեկին մէջ, ուր մէկ բանի ժամ առաջ կը հանդէպ խեղճ Գօմֆրանոս Փետուրեանի անշունչ մարմինը, Այրի Տիկին Փետուր-

եան, իր զաւակը և եղբայրը Սալէմեան, ամենքն ալ սև հագած, հաւաքուած էին այդ գիշեր եւ կը խորհրդակցին յուղարկաւորութեան և մահազգին վրայ):

Տկն. — (Ձաւկիմ) Հայտէ, Լեւոն, սիրտս մի հատցնեք, գրէ լմնցուր...

Լեւոն. — (Գրոխը քողոքիմ վրայ ծռած). Սկսայ արդէն... (կը կարդայ) Յետ կարճատև հիւանդութեան...

Սալէմեան. — Կեցիւր, չեղաւ... պարթ ձեւեր են ատոնք... անունները գրէ առաջ...

Տկն. — Օրինակ մը չիկա՞յ որ վրան նայինք, Լեւոն... սա ամուսնայիդ ֆէւբառը ո՞ր է...

— Սիրտս մի նեղացնեք դու՛ն ալ... օրինակը ի՞նչ է... չես հաւնիր նէ դժուր եկաւ գրէ...

Սալ. — Ինձի ձգեցէք. հայտէ. կռիւի վախիդ չէ՛. (կը նստի Լեւոնիմ սեղոյ) Ան չէ ամա, Հաւրիկեանց անունը պիտի դնենք...

Տկն. — Մեղայ... ինչո՞ւ չէ՛... ազգական չէ՞ մի վերջապէ՛ս...

— Ձէ՛... անանկ ազգական հիշ չունենայինք աւելի ազէկ կըլլար...

— Իե՛ս. չգրեցի արդէն. (կ'սկսի) Այրի Տիկին Գոհարիկ Փետուրեան, Տէր և Տիկին Փետուրեան և զաւակունք, Խոսրովիկ էֆ. Սալէմեան, Տէր և Տիկին Յակոբեան Ամբակումեան, Տէր և Տիկին Տքդ. Անճարակեան...

— Կը բաւէ՛, միւսները գրէ հիմայ...

— Կայնէ ճանճմ, Տէր և Տիկին Համբիկ...

— (Ոսֆի եղած), Ձգէ՛, մի գրեք ըսի...

Տկն. — Խե՛նդ ես. Լեւոն. ի՞նչ եղար նորէն:

— (Բարկոյրեամբ) Ի՞նչ պիտի ըլլամ. ամուսնայիս բարաները կերաւ, քերա... (կը փռէ):

— Ամօթ է. Լեւոն, սէնէս չէ՞ ես գրածս...

Տկն. — Դուն մտիկ մըներ, գրէ լմնայ...

— (Դրեղով) Տէր և Տիկին Համբիկ Խաչիսաշեան...

— (Սալէմեանիմ ձեռքէն գրիցն առնելու ձեւով) Ձի՛ պիտի գրես, թող չի պիտի տամ...

Տկն. — Աստուած իմ...

— Ատանկ մարդոցը անունը պատիւս կաւրէ, կը հասկնամ...

— Ինչո՞ւ ճանճմ, թուումպածի չէ ես մարդը, ի՞նչ կըլլայ...

Տկն. — (Յուզուած) Սա եղածը նայէ մէյ մը... չէ՞ք ամչնար կոր...

— Տղուդ ըսէ. ան է աս խօսքերը հանողը...

— Իրողութիւնն է. . . ամէն մարդ գիտէ ինչ ըլլալը. հօրս պատիւը չեմ կրնար աղտոտել մեռնելէն վերջ:

— Է, ի՞նչ ընենք հիմայ... կրնան ըսել որ ազգականս չէ...

—Կըսեմ, ինչո՞ւ չէ...:

Տկն.—Խենդ մ'ըլլար, քուզինդ առած է...:

—Երանի թէ չառներ, ինչի՞ն հաւնեցաւ չիյտեմ... ատանկ անգգամի մը...:

—Յանցանքը ամուսնայինդ է... Թո՛ղ չի տար...:

Տկն.—Աստուած ողորմի հոգուն, ան ալ աննըման բան մը չէր, աղջկանը փարան փողոցը նետեց...:

—(Հանդարտ) Է՛, վերջապէս ի՞նչ ըսել կուզէք

... չի դնե՞նք անունը...:

Տկն.—Ձգէ նայինք... միւսները շարունակէ...

—Բայց պէտք է գրենք, Տէր և Տիկինով ուրիշ անուն չի մնաց ալ...:

—(Բարկութեամբ) Պէ՛, աղբար, հիշ չգրես նէ ի՞նչ կըլլայ... պայազի մարդը... բերանս բանալ մի տար...:

Տկն.—Վազ անցիր, կնիկն ալ ձգած է արդէն:

—Շատ աղէկ, անանկ թող ըլլայ... կռիւ ընելու վախիդ չունիմ... (կը շարունակէ գրել) ինչպէս նաև Փետուրեան, Սալէմեան, Ամբակումեան, Անճարակեան, Վանտոհայ, Գաղմաճիտիւ ընտանիքները, աղգականք և բարեկամք ցաւ ի սիրտ կը...:

—Կեցիր, չեղաւ... ինչո՞ւ ցաւ ի սիրտ, միայն ցաւօքը կը բաւէ, պապայիս մերասը պիտի ուտենք...:

Տկն.—(Չարկիւ) Խենդ...:

—Իրաւունք ունիս, աս տղադ բան մը եղեր է այսօր...:

—Խենդը դուք էք որ մեռած մարդուն շուրջը կռիւ կընէք կոր...:

Տկն.—Տահա դէմս է գիտես որ կիւզելիմ մարդը, վախ (կուշայ):

—Շատ աղէկ, ցաւ ի սիրտը կը հանենք, ցաւօք կը ծանուցանեն զգառնալէտ մահ յանձին Դոմնիանոս էֆ. Փետուրեանի որ հանգեաւ ի Տէր...:

—Խենդ Ես, եղբայր, անունին տակը բան մը դնելու ես...:

Տկն.—Նորէն բան հանէ նայինք...:

—Բան հանելը ի՞նչ է պօ՞շ մարդ էր հայրս...:

Տկն.—Արեւ սիրեմ, օր մը օրանց չէր կոտորած սիրտս (կուշայ):

—40 հաշար սակի տէր էր այս օրուան օրս...:

—Է՛, ի՞նչ կուզես որ ընենք, գրենք տակը որ 40 հաշար ոսկի ունէր...:

—Ձէ՛, բայց բան մը գրելու է...

—Շատ աղէկ, ըսէ նայինք (գրելով) Դոմնիանոս էֆ. Փետուրեանի, Սեղանաւոր...:

—Ադ ալ չեղաւ...:

—Ինչո՞ւ, եղբայր, սեղանաւոր պանգիէն...

—Աղէկ, բայց... բայց... Պանքէն... պանգիէն ուրիշ իմաստ ունի... սեղանաւոր չէ. քէօ...

չէ սարաֆիին ալ սեղանաւոր կըսեն... պանգիէն գաղղիներէն ֆէռառին մէջ կը դնենք...:

—Անոր ալ աղէկ, հայերէնին մէջ լատին չգրենք ուրեմն...:

—Ուրիշ բան մը գրենք...:

—Շատ աղէկ գրենք (թերեւ ծիծաղ մը) նախկին բաժանորդ. Խիկար պատուական օրագրոյ:

—Ծաղրելու ելար...:

—Ի՞նչ գիտեմ. քեզի պէս մարդուն ասանկ կը վայլէ...:

Տկն.—Վազ անցէք, բան մը մի գրէք...

—Ի՞նչ կայ որ գրեմ արդէն ճանճմ. կը խենդեցնէք կոր մարդը...:

Տկն.—Իրաւ է, ամէն մարդ գիտէր ո՞վ ըլլալը...

—(Բարկութեամբ) Ի՞նչ կուզէք նէ, ան ըրէք. շունչս հատցնելու ժամանակ չունիմ (դուրս կելնէ):

—Սալ.—(Շարունակելով գրել) Որ հանգեաւ ի Տէր, ի հասակի... տարիքը գրենք...

Տկն.—Ձէ՛, ճանճմ. պզտիկս չէ՛ր ես...

—(Շարունակելով) Որ հանգեաւ ի Տէր, ի խոր սուգ հասկելով եմ...

Տկն.—(Յուզուած, ինքնիշխան խօսելով)

Վա՛յ գլխուս, վաղցունը անցած էր, ամա ինծի հետ տեսնողը 40 տարեկան կը կարծէր... կիւզելիմ կէնճութիւնս լմնաց, ինծի պէս ճահիլ մէկը առնելու արժանի չէի՝ աճապ գոնէ աս տարիքէս մէջ այլի չէի մնար... (կը շարունակէ լալ, միևնրեւ Սայեմեան Մահապոյր կամրոջ ջաջնէ անխօսակ):

Կ. Պոլիս

ՏՕՄԻՆՕ

ՄԱՅԻՍ

Մայիսի սուրբին օրուան առտուն, գրեթէ ամեն մարդ, պարտէզ, այգի կամ հովանի վայրեր գիմելով գէթ գաւաթ մը կաթ խմելու եւ կամ պզտիկ նախաճաշ մը ընելու սովորութիւնն ունի. թէև կան շատեր ալ որ այս արշալոյսեան աւանդական զբօստները վերջալոյսեան զբօսանքի, այսինքն կաթ խմելը օդի խմելու վերածած են:

Սոյն երկու դասակարգին ալ բարի ախորժակ մաղթելէ վերջը, սկսինք մեր աչքին հանդիպած մէկ քանի տեսարանները նկարագրելու:

Նոյն օրը Մաքսուտ աղայի լճակին եզերքը ուռենիներուն տակ խումբ խումբ նստած էին ամեն աղգէ արք, կանայք, երիտասարդք և օրիորդք, որոնցմէ շատերը օգին ցրտութեանը դէմ դիտողութիւններ կընէին և կաճապարէն աւան-

գական նախաճաշը ընելով տուն վերադառնալու:

—Քա աղջիկ, կէօլին քէնարէն աստին եկու՛, ձայնեց տիկին մը իր փոքրիկ աղջկանը. գուզում Եամշագրամ՝ աղա, դուն ըսէ՛ «ըվոր»:

—Եկու աղջիկս, եկու. քի շէքէրճին գայ նէ՛ քեզի շէքէր պիտի առնեմ:

—Անչէ՛ ամա, կաթին մէջ, շէքէր դեմը չի մոռցար ես:

—Աս խտար տալի՞նք գիտցար զիս:

—Աննիցա, րախիյիս չիշէն ո՛ւր դրիր:

—Սէքէթին մէջը, չիւօղնեւուն քոջն է:

—Քա աս ինչ է, չիւօղները չեփած առեր բերեր էք:

—Ես անանկ աճէլէ ըրիք քի աղջիկը եփելու մոռցեր է. էյ զարար չունի սա քովերնիս նստողները քէպադի համար կրակ վառեցին, ան կրակին վրայ կեփեմք:

—Կրակը իրենց պէտքը չէ՞:

—Աման դուն ալ, երկու չիւօղին եփելն ալ պանս ըլլայ:

—Էյ ես հիմա րախիյիս ինչ մէկէ պիտի ընեմ:

—Էյ հէրիք զուրցեցիր, խելքս գլխէս մ'առնեմ, մօրդ կաթը չէր ես:

—Վազ անցայ, ես չէի ըսողը, սա չիւօղները ինծի տուր. նէ՛ սագալա միննէթ նէ՛ պըյըղա, խահվէճիին կրակին վրայ ես հիմա կեփեմ կը բերեմ:

—Եամշագրամ աղա, քէք թօշաթ մարդ մը կըլլաս կոր, հիմա առտուանցով ատ զէհիր զէմպէրէկ բանը կը խմուի՞. պարէ կաթը խմելէդ ետքը պաշլայէիր:

—Ես կաթէն բան մը չեմ հասկնար, հէմ մէյմըն ալ րախիյիս խօսքը ընես նէ՛ շաբաթ իրիկուն բերուելիք պլուզացուիդ խերը տեսնես:

—Վույ արևուդ մեռնիմ, ես շախա ըսի, անուշ շէքէր ըլլայ. ուղածիդ խտար խմէ՛. աչք ունեցողին աչքը էլլայ: Ես քեզ գիտեմ, խօսքիդ տէրն ես, շաբաթ գիշեր պլուզացուս պիտի բերես:

—Անանկ է զիս ըռահաթ, քէֆիս ձգելու ես:

—Պիսթօս հանրմ, սա գիմացի տղան ձեռքը բռնած մեկնէջէյովը նայէ՛ օրիորդ ինգոսին ինչ իշմարներ կընէ կոր:

—Ես ալ տէմինտէն պէրի անոնց կը նայիմ, կը մարին կը մարմրին կոր:

—Նայէ՛, նայէ՛, մէնէքէն սրտին տարաւ տէ անկէ՛ եաբրաթ մը փրցուց:

—Սիրտս կոտորեցիր ըսել է՝ ո՛վ գիտէ մէջերնին ինչ անցած է:

—Քա նայէ՛ ինգոսն ալ ձեռքի սէօյլետին

եաբրաթովը բերանը գոցեց. աճապա սո՛ւս եղիր ըսել կուզէ:

—Չէ՛, բերանս բռնուեր տէ՛ ան լա՛նըրտըն քեզի չընէի՛ կըսէ կոր. ո՛վ գիտէ սիրտ կոտորուկ բան մը ըսած է տէ ետքը բիւշման եղած է:

—Մալրիկ, մայրիկ, նայէ՛ ո՛վ կանցնի կոր:

—Առջիդ նայէ՛ քա, հիմա աչքդ կը փորեմ հա՛, զէվզէ՛կ:

—Քա ամա նայէ՛ ինչ կըստօլու՛ տէլիխանը է, սըւիկա փարա չուզեր նէ՛. . . հէ՞ մայրիկ:

—Քա սուս՝ քա, կիմանայ, խելքիդ եկաւ:

—Մայրիկ, ճէպէն մանտիլ մը ձգեց, ելլամ տամ:

—Տեղդ նստէ՛ քա վաթկած, ինչո՛ւդ պէտք է, քիթէ բերնէ մի՛ բերեր. հիմա գլուխս կառնեմ տուն կերթամ:

(Թույ աստեք իրենց բանակուիւր շարունակեն, մենք ընթերցողին հետ գէպի գերեզմանատուն երկնանք):

—Կարպիս, եիւրիւ եէթիշէլիմ. շիմտի վուրու շուրար:

—Նէրէտէ օլաճագ պու տուէլլօ ես պէ՛:

—Փրանսըզ մէզարլըընըն արգասընտա:

—Մօրի Տէշքինի, Փրանսըզ մէզարլըընըն արգասընտա տավուլլու մայրս եաբըյօրլար ըմըշ:

—Կարպիս պէ՛, պու տուէլլօ մէսէլէսի նէ՞ տէն իլէրի կէլմիշ:

—Պիր հաֆթա էվվէլ պիր ճէնթըլմէնէ հագարէթ օլուշ տէ՛ ճէնթըլմէն հասմինէ պիր պօխ եիւքէթտիքտէն սօնրա շու մէալտէ պիր տուէլլօ տավէթնամէսի կէօնտէրմիշ:

«Պանա իթտիլին հագարէթտէն տօլայը, եանի՛ ըլտէնկօթումա պալօն պաղլատըըն իշիւն սէնի մայրսին պիրինճի կիւնիւ սապահըսը Փըրանսըզ մէզարլըընըն արգասընտա տավէլլօյա տավէթ իտէրիմ. թարաֆըմտան սեֆուսանք շահիտ օլաճագ. սէն տէ քիմի իսթէրսէն նասպ իտէ պիրիսին. էկէր ժէօն տէօնէր իսէն տուէլլօյու դապուլ իթմէլիսին. հէր իքմիդտէն պիրի էօթէք ի թիւնեայա կէօշ էթմէլի տիր:

Մըսթըր Բօֆ

—Յանա պի շէյ տէյիմ մի կապիս, ճանտարլար իշիթիլէրսէ հէր իքսինի տէ աթարլար տէլիյէ:

—Եավաշ սէօյլէ, պալօնու թագան՝ սիկարսսընը եադմըշ պիր իքի տօսթույա էօնտէն կիտէյօր. . . ա՛յ, օ՛ նէ՛ ես, խասմի օլան տա գարշըտան կէլիյօր, պագալըմ նէ՛ եաբաճագլար:

Պու արա իքի խասիմէր պիրիպիրէրինի
գարչըլաւըլար :

— Պու Եանա կէլ, մուշի. Թրրրանսըզ մէ-
զարլըղը արգասընտա տուէլլօ իտէճէիզ :

— Հատէ պրէ կիթ իշինէ, ատամը պուրատա
պաղլարլար թրնովայա եօլլարլար :

— Նասըլ. գապուլ իթմէօրմուսըն :

— Եօգ, իթմէմ :

— Եօգմու տէյօրուսն :

— Էվվէթ, եօգ տէյօրում, նէ Եաբաճաըն :

Հաղըրուստան պիրի. — Պագսանա այ օղււլ,
օ ատամըն պըլըգլարը պիլէ եօգարը տիքիմիշ,
եօգ իշարէթի կէօթէրիյօրլար. սէն իսէ հալէա
զօրլայօրուսն :

— Տէմէք սանտա օնօր եօգ. ըրֆիւս էտէր-
սըն հա. տէմէք բարտօն Եաբաճազսըն :

— Աղբար, սէն տահա թիւրքէյի պէճէրէ-
մէյօրուսն, ֆրանսըզճայը նիշինէն ալթիւսթ ի-
տէյօրուսն :

— Որասը սանա ֆարզ տէյիլ. պու նամուս
տըր, պէնիմ էթէկիմտէն պալօն պաղլայասըն ..

— Կիթ իշինէ, աալէմի պաշըմըզա թօփլա-
մայալըմ, հէմ շունա պալօն տէյէճէինէ չէրքէզ
գալբազը ուշուրմասը տէսէն տահա էյի օլուր :

— Յանա տէյօրում քի նէ սիւահ իլէ տուէլ-
լօ իտէճէիզ :

— Տէ պրէ, չէք պագայըմ չագընը :

— Եօգ, չագը իլէ օլմալ, պըչագ Եախօտ
գըլըճ իլէ Եաբաճազըզ :

— Պէնիմ իշին տէ օնլար օլմալ :

— Ալթը բաթլար ըլա օլտուն :

— Իթթէմէմ :

— Էյ նասըլ Եաբալըմ :

Բոժոժիկ. — Միւսիւլէր, օլտու օլաճագ, պիր
ազ տահա սապը էտին տէ թուրֆանտա քէօր-
բէ պալտըրան եթիշիրսէ օնուն բաթլանկու-
ճուլա տուէլլօնուզու իճրա էտինիզ :

Բոժոժիկի այս առաջարկը ունկնդրաց կող-
մէ ընդունուեցաւ, որոնք երկու բարեկամները
հաշտեցուցին ու զանոնք առաջնորդեցին դէպի
Բաքասի, անշուշտ մայիսի աւանդական կաթը
խմելու համար :

ՋՈՒԹԱԿ

 Հրատարակուեցաւ «Այինէի Լէթայիֆ»-ի
իննեւորդ տետրակն ար 20 տետրին բաժնեդինն
է Պուկարիոյ համար 2 ֆր. արտասահման շուկէս
ֆր. կանխիկ

ՏԵՄԱԳԻՐ

(Աժանա Բոժոժիկի և Ընկ)

Թանքին

Մասնաւոր վարժարանի մը տնօրէնը ըրած
վերջին շահատակութիւններէն արգարանալու
համար ինքզինքը . . . սուտ խենդ ձեւացուցած
է :

Բոժ. — Կլլող չի կալ :

Վառնա

Մայիսի աւտուն, օրիորդի մը գըպանէն
ինկած սիրահարական նամակ մը գտնուեցաւ,
ուր ի մէջ այլոց գրուած է՝ «Խուզի պաղըրտախի
սարմասի պէս ոլորուն պիւտերուդ վարնուած
եմ, այդ ագռաւի նման ձայնիդ համար կ'երիմ
ու պալրամ սալընճախիի պէս էտաներուդ հա-
մար կը մեռ . . . » նամակին մնացորդ մասը
ցեխոտ ոտքով կոխկռտուած ըլլալէն չի կըցինք
կարգալ, ուստի մասնագետի մը յանձնեցինք
անալիզ ընելու, որպէս զի ամբողջութեամբը
հրատարակուի :

ՄԱ. ԴՕԴՕ

Մագսուտ ալա

Փարիս հանըմը իր ահուսնոյն հետ Եւարդի
ելաւ . . . օղի խմելու համար, ու այնչափ գի-
նովցաւ որ բեռ կրող սայլի մը մէջ գրուած
տուն փոխադրուեցաւ :

ԱՄԱՌՆԱՅԻՆ ԹԱՏՐՈՆ ՊՈՐԻՍ

ՀԱՃԻ ԲԱՆԱԳՕ

Վառիքեթ խումբին կողմէ

ԱՅՍ ԳԻՇԵՐ. — Վ. Հիւլիոյի Էռնանի, Մնջկա-
տակախաղ 4 արար և Կեւարիոյ ճամբորդները,
կատալիսալ թուրքերէն լեզուաւ 3 արար: Հո-
վիւ եւ Հովունի Տուէթթօ Պ. Յակոբեանի և Օր.
Մարիքայի կողմէ: Պարեր ու երգեր ամէն լեզուէ:
ՎԱՂԸ ԳԻՇԵՐ. — Կեղծ Խալիլիկը, Գնչկատակա-
խաղ 4 արար և Զէյպէֆնէ կատալիսալ թուր-
քերէն լեզուաւ 3 արար: Պարեր ու երգեր ամէն
լեզուէ: Գին սովորական :

ԹԵՐԹՈՆ «ՀԱՅԵԼԻ» (18)

ՈՐԵՆԷ ՏՐ ԲՕՆ ՍԷ

ՄԱՐԳԱՐԻՏՆԵՐՈՒ ԳԵՏԸ

(ԳԱՐՄԱՐ-ՄԱՄՈՒՆԵ)



Այս ներստ թողին հաղարումէկ վտանգներէն անցնելէ ետք մարդ շատ նեղ վանդակադոնէ մը անցնելով կը հասնի տեղ մը ուր ընդհակառակն ամենակատարեալ լուծութիւն և ամենաերկիւղած հանգարտութիւն կը տիրեն :

Մարդ հոն կը գտնուի անսահման շրջափակի մը մէջ, պարուրուած աւելի բան երեսուն մեղք պատէ մը որուն մէջտեղ կը գտնուի Պուտտաի մեհանը, այլանդակ շէնքերու խառնամառն կոյտ մը :

Հոն մտնելու համար պէտք է անցնիլ երկրորդ դռնէ մը զոր կը պաշտպանեն երկու հսկայաձեւ արձաններ ահաբեկիչ գունաւորութեամբ, որք ժամանակին նախատիքներուն կը դիմանան զիրենք պաշտպանող ոսկեգոծ տանիքներուն շնորհիւ, վասն զի խայծրանացեալ թուղթէ շինուած են լոկ :

Կը ներկայացնեն սակայն Երկնային Կայսրութեան ամենէն համբաւուր պատերազմիկներէն երկուքն :

Գալով գլխաւոր շէնքին, բուն իսկ մեհանին, հասնելէ շէնք մըն է, փոքր բազմաթիւ սրահներու բաժնուած, որոց իւրաքանչիւրը զատ զատ շատուածութիւններու յատկացուած է : Ամենէն նշանաւոր տեղն է այն սրահարանն ուր կիշնէ Պուտտա :

Հարիւր ոտք տարածութեամբ սրահ մըն է, որուն գետինը յատկուած է ամենապեղծիկ մոզայիքներով, բայց, ի պատիւ փոխարքային, թանձր գորգ մը փռած էին հոն :

Մեծ շրջանակներ, որոց մէջ ոսկեայ տառերով առածներ գրուած էին, կը զարդարէին կարմրաներկ պատերը :

Չատուածը հոն ներկայացուած էր երեք արձաններով զորս երեք բաժները կանուանեն, այսինքն Անցեալը, Ներկան ու Ապագան, որք հռչակաւոր վերանորոգչին կուտան այն անհամ նկարագիրներն որոցմով վարձատրած են զայն Հնգիկները :

Այս արձաններ շրջապատուած էին ձուլածոյ արծաթէ փոքր խորաններով, որոց վրայ անուշ հոտեր կը փսփսէին : Բայց մեհանին այս մասին ամենէն արտակարգ զարդն էր անշուշտ պղինձէ երկու մեծ վիշապ-

ներն հողաթեւ, որք երկու շայրերը կը գրաւէին եւ կարծես իրենց մեծագին քարէ աչքերով կը հսկէին նրա իրական տեղւոյն վրայ :

Իշխանը նստաւ գահին վրայ որ իրեն վերապահուած էր, Պուտտաի արձաններուն դիմացը : Իր պաշտօնակալները շուրջը խմբուեցան եւ արարողութիւնն սկսաւ, ամենապարզ արարողութիւն, վասն զի բուրմէրը կրօնական ազոթքներ միայն զրուցեցին որոց ընկերացան կրօնաւորներ բաւական ներդաշնակ զանգակահարութիւններով :

Մէկ բաւորդ չբշած, ամեն բան վերջացած էր և փոխարքան կը մեկնէր մեհանէն՝ ձօն ընծայ մը ընելէ յետոյ մեհանին :

Իր կոնտոլան ցամաք առաջնորդէր զինքը, ուր դուտաւ նորէն իր գահաւորակը և իր բնակարանին ճամբան բռնեց, այս անգամ իր ետեւէն ունենալով տիկին Լիուն, զոր գահաւորակի մը մէջ նստեցուցած էին :

Ապարանք հասնելուն պէս՝ կիներու յարկաբաժինն առաջնորդուեցաւ, ուր օրն անցուց փոխ ի փոխը յուսոյ եւ յուսահատութեան մէջ, վասն զի ի զուր սպասեց որ իշխանը կանչէ զինքը :

Երբ գիշերը վրայ հասաւ, իր անձկանքը աւելցան, տեսնելով որ աղջկանը բով չի կրնար երթալ :

Չյաջողելով հանգստանալ, միտքովը կը դառնար Սօլ—Պրոտէին բով և այն ատեն կը յիշէր բարեբաւոտ ու հանգարտ կենցաղը զոր դեռ քիչ ժամանակ առաջ կը վարէր Ֆուն—Սի իր փոքր տան մէջ :

Միտքէն չէր անցնէր որ այն համեստ բնակարանին մէջ, ուր դժբախտութիւնն արդէն մուտ գտած էր և որուն պահպանութիւնը Վարդին էր յանձնած, այդ վայրկենին իսկ նոր տաճարի մը թատերափայլը կը լլար :

Անխոհեմ ազախներ քաջ գիտնալով որ ոչ Լիուն—Սիուն ոչ անոր Ի—Թէ մօրեղբորդին չէին կրնար ըլլալ հեղինակներն այն ոճրին որ տանջանքի կենթարկէր զանոնք, բունն երկիւղներու ենթարկուած էր :

Քսան անգամ քիչ քնացեր էր որ քանդոն վազէ ըսելու համար ոստիկանութեան վերատեսչին ինչ որ անցած էր իր և Չուի միջեւ, վասն զի համոզուած էր թէ այս մարդն էր Լէնկի սպանիչը, բայց մինչեւ վերջին վայրկեանն յուսացած էր որ երկու անմեղները չը պիտի դատապարտուէին, և իմանալուն պէս անոնց վերապահուած վիճակը, վախցաւ որ իր յապաղած յայտարարութիւնները գէշ հետեւանքներ կուենային եւ լուծութիւն պահեց, այսպէս մեղսակից ըլլալով սպանութեան :

Չէր համարձակեր իսկ դուրս ելլել, վասն զի դուռը բանալուն պէս իր աչքերն ահամայ կը գտնային մտադործի խանութին գոց փեղկերուն վրայ, և կը թըլէր իրեն թէ հրէշը զոր ստամբակները կարմրագոյն գծած էին հոն, զինքը տեսնելով կը կենդանանար և կը պատրաստուէր իր վրայ յարձակիլ:

Հոգեկան այս տրամադրութիւններով Վարդ փակուած էր տիկին լիութի տան մէջ, իրիկունն այն օրուան որուն զանազան դարձումները պատմեցինք, բայց ինչ պէս իր տիրուհին կընէր իշխանական ապարանքին մէջ, ինքն ալ ի զուր օգնութեան կը կանչէր բունը:

Գիշերը երկար տեսնէ ի վեր վրայ հասած էր, բաղաքն հանգիստի մէջ էր թաղուած, փողոցներն ամառի էին: Այս լուծիւնն իսկ կահաքնկեր զայն: Վախը, ինչպէս նաեւ խղճի խայթը արթնուն կը պահէր զինքը:

Յանկարծ ոտնաձայներ լսեց փողոցին մէջ, և գըրէթէ նոյն վայրկենին, դեռ չարժում մը չըրած, կապկըպուած էր և բերանը գոցուած, այնպէս որ աղաղակ մը իսկ չէր կրնար արձակել:

Այն տեսն թուեցաւ իրեն թէ առ նուազն երեք մարդեր մտած էին տան մէջ, բայց մութն այնքան սաստիկ էր որ չէր կրցած որոշել անոնց դէմքը:

Հաստ չանցած կրցաւ ուզածին պէս տեսնել զանոնք, վասն զի այդ անձերէն երկուքը ճաշասրահ փոխադրելով զինքը, լամպար մը վառած էին:

Արդարեւ երեք հոգի էին, գետի ձկնորսներու պէս հաղուած, յոյժ զարհուրելի երևոյթով:

— Աճապարենք, ըսաւ այն որ պետերին կերելուար, ծրարի մը պէս փաթթեցէք այս աղւոր աղջիկը: Եթէ աղաղակէ, խեղդեցէք:

Մանկամարդ աղջիկը զգաց որ կորուած է:

Երկու աւաղակները որք գետին վրայ պառկած կը բռնէին պինքը, կերպասի կտոր մըն էին նետած երեսին վրայ և վիզին շուրջը կապած էին զայն. բաղուկներն ու սրունգները կը վիրաւորուէին իր մարմինը կապող շուաններէն:

— Լմեցա՞ւ, հարցոց բրտօրէն այն ձայնը զոր Վարդ լսած էր արդէն:

— Այո, պատասխանեց ձկնորսներէն մէկը:

— Փախչինք ուրեմն:

— Օ՛հ, ձեռքերնիս ոլարապ չեթթանք: Մինակ վարպետին գործերուն չնայինք, քիչ մըն ալ մերինները հոգանք:

Եւ, առանց արածնութեան սպասելու, իր երկրորդ ընկերոջ հետ անհետ եղաւ քովի սենեակը:

Հինգ վայրկեան ետքը ետ կը գտնային իւրաքանչիւրը ծանր ծրարով մը ուսին վրայ:

Չեոքի մէկ դարձումներով կողոպտած էին տան մէջ քանդած թանկագին իրերը:

— Հիմակ ճամբայ ելլե՛նք, ըսաւ այն որ կը հրամայէր:

Երկու թշուառականները վերուցին աղախի՛նք, մէկը գլխէն, միւսը ոտքերէն բռնելով, եւ դուռ ուղղուեցան:

Երրորդ անձը կանխած էր զանոնք փողոցին մէջ՝ ապահով ըլլալու համար թէ ամայի՞ էր:

Ոչ որ կանցներ. լոյս անգամ չէր երևնար մօտակայ տուններուն մէջ:

Ցած ձայնով կանչեց իր մարդիկը, և դուռը մեղմիւ գոցելէ հետք անոնց հետեւէն, դուռն անցաւ մահաստուեր խմբակին, որ քանի մը քայլ հեռուն գրտնուող դռի՛նէ մը դէպ ի գետ ուղղուեցաւ:

Նաւազներէն մէկը, իր քողցած իրերն յանձնելէ յետոյ իր բարեկամին, բռնած էր Վարդը: Ուսին վրայ երկու կողմէն կախուած, խեղճ աղախինը ձկնորսի ուսականներու ծրարի մը կը նմանէր:

Հինգ վայրկենէն գետեզր հասան:

Լուսին չիկար և աստղերը չէին շողար:

Մաիգարիտներու գետին ջուրերը, որուն եզերքները չէին որոշուեր, մահանուագ կը թաւալէին, իրարու զարնելով նաւակները որք արդին մէջ միուած ցիցերու կապուած էին:

(Շարունակելի)

Բարեյիշատակ եղիազար Մուրատեանի հեղինակած «Քննական Պատմութիւն Արշակ Բ.ի և անոր Պապ որդւոյն» անուն երկասիրութիւնը այս անգամ լոյս տեսած է Աղեքսանդրոյ «Արաքս» նորահաստատ տպարանէն և կը ծախուի ի գին 2¹/₁₂ ֆրանք: Պուրկարիոյ և Ռումանիոյ մէջ ստանալ փափագողք գիմեւու են մեր խմբագրութեան:

Խ. Գ. Հ Ի Ն Տ Լ Ե Ա Ն

ՏԵՍԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Պաշխարհեմ լեզուի

Գին 1 ֆր.

Դիմել Հայելիի խմբագրութեան:

Печатница „Взаимность“ — Варна